Կոնդակ շնորհաւորութեան և օրհնութեան յանուն Գաբրիէլ Էֆէնտիի Նորատունկեան վասն տարեդարձի անուանակոչութեան։ Թ. 369։

Հայրապետական պարգեւք

Կոնդակք յանուն Տ. Տ. Ներսէս, Մխիթար, Մեսրոպ և Կարապետ եպիսկոպոսաց, որովք շնորհեցան եպիսկոպոսական պանակէք։ Թ. 280, 281, 282 և 283։

Կոնդակ յանուն Տ. Մեսրոպ վարդապետի Նշանեան, միաբանի Ս. Աթոռոյն Երուսաղէմի, որով շնորհեցաւ վարդապետական լանջախաչ։ Թ. 310։

ԲԱՂՈՒԱԾՔ ԾՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

—Սեպտ. 2-ին Սինոդը որոշեց Տ. Նիկողայոս վարդապետին ուղարկել Երնջակի ս. Կարապետ վանքը որպէս միաբան նոյն վանքի։ Թ. 521.

—Նոյն օրը Սինոդը լսելով Վարդան Արզումանեան (Իգդիրմաւա), Մկրտիչ Զաքարեան (Իգդիր), Ներսէս Տէր-Գրիգորեան (Ալիջան), Գարեգին Գալստեան (Հախվերիս), Յովսէփ Տէր-Կարապետեան (Խալֆալու) և Անդրէաս Խուդոյեան (Դաշքուռուն) հանգուցեալ քահանաների վրայ «Արարատ» ամսագրի հաշուից մնացած ապառիկների գործը, որոշեց գործը կարճել և նկատողութիւն անել Երևանի Կոնսիստորիային իր անփութութեան համար։ Թ. 524.

—Նոյն օրը Սինոդը լսեց Թալինցոց գրաւած 4 դես. հողի գործը, որը բացել է վանքի երկրաչափ Կոմարովսկին, կառավարութեան ներկայացուցիչ երկրաչափ Լիսովսկու հետ միասին, որոշեց տալ երկրաչափ Կոմարովսկուն որպէս ճանապարհածախս 21 ր. 18 կ.։ Թ. 525.

—Սեպտ. 4–ին Սինոդը լսելով Երևանի Կոնսիստորիայի յայտարարութիւնը, որով նա թոյլտուութիւն էր խնդրում պահելու հայ–Լուսաւորչական Միքայել Շուշանեանին Ցունադաւան Սոֆիա Գրանինչենկոյի հետ Լուսաւորչական եկեղեցու ծիսով և առհասարակ հրահանգութիւն՝ նոյնանման դէպքերում վարուելու համար, որոշեց, որ Սինոդի 1908 թ. մարտի 26–ի շրջաբերականի համաձայն միայն հայադաւանութիւնը ընդունելուց յետոյ կարող են օտարադաւանները հայոց եկեղեցու ծիսով պսակուել, որի համաձայն էլ վարուել ներկայ դէպքում. թ. 531.

—Սեպտ. 18–ին Սինոդը լսեց Սինոդի անդամ Տ. Մեսրոպ վարդապետի յայտարարութիւնը Նորին Վեհափառութեանը ուղեկցող Տ. Տ. Գրիգորիս և Մեսրոպ վարդ., պ. Մինաս Ջերազի և մի ծառայի վրայ արուած 553 ռ. ծախքի մասին և որոշեց պատուիրել Սինոդիս գանձապահին մատուցանել Նորին Վեհափառութեանը 553 ռ. և գրել այն երեք Մայր Աթոռի տոմարի մէջ. թ. 535.

—Նոյն օրը Սինոդը լսեց Կաղզուանի եկեղեցապատկան այգիների ծախելու գործը և որոշեց օրէնքի 1215 յօդ. (XI հ. I մ.) համաձայն դիմել Ներքին Գործոց Նախարարին թոյլ տալու ծախել Կաղզուանի եկեղեցապատկան հինգ այգիները և նոցա տեղը գնել աւելի շահաւէտ կալուածք. թ. 538.

—Նոյն օրը Սինոդը լսեց Նորին Վեհափառութեան Տ. Տ. Մատթէոս կաթուղիկոսի ամսոյս 12–ին Նորին Կայսերական Մեծութեանը տուած երդման և 13–ին ընդունած Ս. Օծման մասին զեկուցումը և որոշեց նախ՝ այսուհետև Սինոդիս բոլոր օրագիրները մատուցանել ի տոր Գրութիւն Նորին Վեհափառութեան, որպէս Ատեանի նախագահի, երկրորդ՝ Տ. Գէորգ արքեպիսկոպոսին ազատ համարել նախագահողի պաշտօնից և երրորդ՝ Նորին Վեհափառութեան երդման թղթի իսկականը, ռուսերէն թարգմանութեան հետ, ուղարկել Տ. Փոխարքային, պահելով նրա պատճէնը Ատեանի գործերում. թ. 540.

—Սեպտ. 22-ին Սինոդը լսելով Ատեանի արխիւի անկարևոր և աւարտած գործերը ոչնչացնելու մասին զեկուցումը, որոշեց նախ՝ դիմել Ներքին Գործոց Նախարարին 1836 թ-ից մինչև 1895 թ. աւարտած և կարևորութիւն չունեցող գործերի ոչնչացման համար և ապա՝ նորա հաւանութիւնը ստանալուց յետոյ, նշանակել մի յանձնաժողով, որը որոշէ թէ արխիւի գործերից որոնց պէտք է ոչնչացնել։ Թ. 542.

—Նոյն օրը Սինոդը լսելով կալկաթացի աղա Դէորգ Մանուկեանի կտակի տոկոսները ստանալու գործը, որոշեց յանձնել Ս. Պետերբուրգի Մկրտիչ քհյ. Ղազարեանին Նորին Սրբութեան ստորագրութիւնը Անգլիական դեսպանատանը վաւերացնել և Սինոդի թղթի հետ յանձնել Ռուսաց արտաքին գործոց նախարարութեանը որ Կալկաթայի Անգլիական դրամատանից Մայր Աթոռին հասանելի գումարն ստանայ և փոխադրի Սինոդ։ Թ. 557.

—Հոկտեմբ. 2-ին Սինոդը լսելով Էջմիածնի ելեքտրական կայարանի մեքենավար Ղարախանեանի առաջարկը վանքի արտերը ջրելու համար ջրհորներից ջուր հանելու մասին, որոշեց տալ Ղարախանեանին 2000 ռ. այդ նպատակի համար։ Թ. 558.

—Հոկտեմբ. 7-ին Սինոդը լսելով Ղզլարի փոխանորդութիւնը Վլադիկավկազ փոխադրելու գործը, որոշեց ամբողջ գործը ամենախոնարհ յայտարարութեամբ մատուցանել ի բարեհաճ տնօրէնութիւն Նորին Սրբութեան։ Թ. 565.

—Նոյն օրը Սինոդը լսելով հանգուցեալ Կատարինէ Միքայէլեան Նադիրեանցի կտակի գործը, որոշեց հանգուցեալի կտակի պատճէնը ամենախոնարհ յայտարարութեամբ մատուցանել Նորին Սրբութեան ի գիտութիւն։ Թ. 566.

—Նոյն օրը Սինոդը լսելով Դարաչիչակի շրջանում առանձին գործակալութիւն կազմելու գործը, որոշեց ամ-

բողջ գործը մատուցանել Նորին Սրբութեանը ի բարեհաճ տնօրէնութիւն. Թ. 567.

—Հոկտ. 9-ին Սինոդը լսելով Դանձակի վանքապատկան քարվանսարան և խանութները կապալով տալու գործը, որոշեց թոյլ տալ Դանձակի հոգևոր կառավարութեանը վանքապատկան քարվանսարան կապալով տալու Աղա Ալի Մամադ Իրզա օղլուն երեք տարի ժամանակով տարեկան երկու հազար ռուբլով և միաժամանակ այս որոշման մասին յայտնել Վրաստանի թեմի առաջնորդին. Թ. 574.

—Հոկտ. 12-ին Սինոդը լսելով Վաղարշապատ գիւղացի Գասպար Աղազադեանի ձեռնադրութեան գործը, որոշեց ընդունել նորան հոգևոր կոչման մէջ և առաջարկել Տ. Մեսրովբ արքեպիսկոպոսին ձեռնադրել նորան քահանայ Վաղարշապատ գիւղի Ս. Յոդակաթ երկրորդ ծխական եկեղեցու վրայ. Թ. 580.

—Նոյն օրը Սինոդը լսելով հանդուցեալ աշըղ Ջիւանու տպարանին մնացած 211 ռ. 38 կ. պարտքի գործը, որոշեց պատուիրել տպարանի վարչութեան պարտքի տեղ պահել հանդուցեալի երգերի ժողովածուից 500 օր., իսկ մնացեալ օրինակները տալ Ջիւանու այրուն. Թ. 585.

—Հոկտեմբ. 14-ին Սինոդը լսելով Հմայեակ վարդապետ Տէր-Սարգսեանին Երևանի փոխ-թեմական պաշտօնից ազատ համարելու և Գեղարդայ վանքը ուղարկելու գործը, որոշեց յետ կանչել նորան Էջմիածին և տալ հոկտեմբ. 1-ից միաբանական ռոճիկ. Թ. 593.

—Նոյն օրը Սինոդը լսելով Նորին Վեհափառութեան սեպտ. 25-ի, թ. 30 կոնդակը, որոշեց նախ՝ Նորին Սրբութեան թ. 30 կոնդակի համաձայն Խորէն վարդապետ Մուրադբէգեանին ազատ համարել Նոր-Բայազէդի գործակալի պաշտօնից և տալ նորան հոկտ. 1-ից միաբանական ռոճիկ և ապա՝ թոյլ տալ Խորէն վարդապետին գործակալական գործերը յանձնելու ժամանակաւորապէս Սարգիս քահանայ Ազարեանին. Թ. 594.

—Հոկտեմբ. 16-ին Սինոդը լսեց կաթուղիկոսական

հրաւիրակների ճանապարհածախսի մասին զեկուցումը և գտնելով հաշիւները ուղիղ ու կանոնաւոր, որոշեց գործը կարճել։ Թ. 597.

—Նոյն օրը Սինոդը լսելով Աղէքսանդրապոլ քաղաքի բնակիչ Եղիշէ Տէր-Աւագեանցի ձեռնադրութեան գործը, որոշեց՝ լսելով պ. պրոկուրորի բողոքը և բաւական համարելով Ալիխան փոքր գիւղի համար ընծայացուի պատրաստականութիւնը, որը աւարտել է Աղէքսանդրապոլու Ս. Փրկիչ եկեղեցու ծխական դպրոցը, թողնել բողոքը առանց հետևանքի և իրաւունք տալ Եղիշէ Տէր-Աւագեանցին քահանայ ձեռնադրելու Ալիխան գիւղի համար։ Թ. 597.

—Նոյն օրը Սինոդը լսեց Իսահակ սարկաւագի կուսակրօն հոգևորականութիւնից հեռանալու զեկուցումը և որոշեց Իսահակ սարկաւագ Տէր-Ղազարեանին ազատ համարել կուսակրօն սարկաւագի կոչումից և դասել նորան աշխարհականների դասը, յայտնելով այդ մասին Գանձակի նահանգապետին։ Թ. 599.

—Նոյն օրը Սինոդը լսելով այրի Թագուհի Զանփոլադեանի խնդիրը, որոշեց թոյլ տալ նրան Կաղզուան աւանի գերեզմանատանը կառուցանել իւր հաշուով մատուռ։ Թ. 600.

—Նոյն օրը Սինոդը լսելով Մամբրէ վարդապետի հոգևոր կոչումից ազատ կացուցանելու գործը, որոշեց նախ՝ ազգիս Վեհափառ Հայրապետի կոնդակի համաձայն ազատ համարել Մամբրէ վարդապետ Մէլիք-Ադամեանցին հոգևոր կոչումից, դասելով նորան աշխարհականների շարքը և ապա՝ այդ մասին տալ տեղեկութիւն Երևանի նահանգապետին։ Թ. 606.

—Նոյն օրը Սինոդը լսելով Հոթին (Хотинъ) քաղաքի եկեղեցական կալուածքի գործը, որոշեց, Բեսսարաբիոյ կոնսիստորիայի միջնորդութիւնը յարգելով, թոյլ տալ նորան Խոթին քաղաքի եկեղեցական կալուածքը աճուրդով տալ որոշ ժամանակով։ Թ. 606.

—Հոկտեմբ. 19-ին Սինոդը լսելով Նովրուզլու գիւղի եկեղեցու նորոգութեան գործը, որոշեց թոյլ տալ Նովրուզլու գիւղի ծխականներին նորոգելու իրենց եկեղեցին, ծախսելով համաձայն համախօսականի 1500 ռուբլի։ Թ. 614.

—Նոյն օրը Սինոդը լսելով Վանական Կառավարութեան յայտարարութիւնը Տ. Ղևոնդ եպիսկոպոսի հրաժարականի մասին նոյն կառավարութեան նախագահութիւնից, որոշեց, ի նկատի առնելով, որ Նորին Վեհափառութեան յանուն Տ. Գէորգ արքեպիսկոպոսի կոնդակով, Վանական բոլոր պաշտօնների համար ընտրութիւն է նշանակուած, կարճել այս գործը։ Թ. 615.

—Նոյն օրը Սինոդը լսելով Բուրթայիսի Աշոտ քահանայ Տէր-Իսրայէլեանին գործակալութիւնից հեռացնելու գործը, որոշեց, ի նկատի առնելով, որ գործակալների նշանակելը կախուած է թեմական առաջնորդներից, Բուրթայիսի ծխականների խնդիրը մերժել։ Թ. 617.

—Նոյն օրը Սինոդը լսելով Աղէքսանդրապոլ քաղաքի ծխատէր Մկրտիչ քահանայ Աֆրիկեանին ս. Նշան եկեղեցուց ս. Աստուածածին եկեղեցին փոխադրելու գործը, որոշեց, անհիմն և անկանոն համարելով Մկրտիչ քահանայ Աֆրիկեանի փոխադրութիւնը ս. Նշան եկեղեցուց Ս. Աստուածածին եկեղեցին, պատուիրել Երևանի Կոնսիստորիային կրկին նշանակել նրան հովիւ Ս. Նշան եկեղեցու ծխականների։ Թ. 618.

—Հոկտեմբ. 23-ին Սինոդը լսելով Վեհափառ Կաթուղիկոսի կոնդակը Ներսէս ծ. վարդ. Խարախանեանին, Մխիթար ծ. վարդ. Տէր-Մկրտչեանին, Մեսրոպ ծ. վարդ. Տէր-Մովսիսեանին և Կարապետ ծ. վարդ. Տէր-Մկրտչեանին եպիսկոպոս ձեռնադրելու մասին, որոշեց յանձնել Տ. Արիստակէս վարդապետին երդուեցնել յիշեալ նուիրեալներին ըստ սահմանուած կարգի, Սինոդի անդամների ներկայութեամբ, ամսոյս 24-ին առաւօտեան ժամը 11-ին։ Թ. 619.

—Նոյն օրը Սինոդը լսելով Մուխրանեան փողոցի կալուածքի փոխարկութեան գործը, որոշեց պատուիրել Տիֆլիսի վանքապատկան կալուածքների կառավարչին փոխարինել Մայր Աթոռի կալուածքը, որ գտնուում է Մուխրանեան փողոցի անկիւնում, Շիրվանի պարսպ գետնի հետ, իսկ եթէ այն անհնար լինի—Պապկովի տան հետ և քաղաքային վարչութեան հետ համաձայնութեան գալուց յետոյ, կալուածների փոխարինութեան պայմանագրի նախագծի մի օրինակը ուղարկել Սինոդիս վերջնական տնօրինութեան համար։ Թ. 620.

—Նոյն օրը Սինոդը լսելով Բագու քաղաքի բնակիչ հանգուցեալ Եղիա Դալստեան Բուդաղեանի կտակի գործը, և ստացած լինելով Վեհ. Հայրապետից, Նորին Սրբութեան տրամադրութեան տակ դրուած յիշեալ կտակի 2000 ռուբլին, որոշեց Վեհ. Հայրապետի կոնդակի համեմատ 2000 ռ. իբրև անձեռնմխելի գումար, փոխարկելով տոկոսաբեր տոմսերի պահել դանձարանում Մայր Աթոռի ճեմարանի անունով, միայն տոկոսիքը ճեմարանի պէտքին գործադրելու պայմանաւ և հրամայել Սինոդի դանձապահին այդ գումարը մտցնել Աթոռային դրամների տուժարի մէջ։ Թ. 628.

—Հոկտեմբ. 26-ին Սինոդը լսելով Սևանայ վանքի ½ դես. հողը կապալով տալու գործը, որոշեց թոյլ տալ Սևանայ վանքի վանահօրը արքունի կալուածների կառավարիչ պ. Մերգիխովսկու հետ պայման կապել վանքապատկան ½ դես. հողը կապալով տալու համար վեց տարի ժամանակով։ Թ. 632.

—Նոյն օրը Սինոդը լսելով Ղուշչի գիւղացի Մատթէոս Տէր-Միքայէլեանցի ձեռնադրութեան գործը որոշեց՝ ձեռնադրել Մատթէոս Տէր-Միքայէլեանցին քահանայ Ախալքալաք գաւառի Դերէ գիւղի ծխականների վրայ։ Թ. 640.

—Նոյն օրը Սինոդը լսելով Զանգեզուր գիւղացի Անդրէաս Ոսկանեանի ձեռնադրութեան գործը, որոշեց թոյլ

տալ Ղարաբաղի կոնսիստորիային ընդունել Անդրէաս Ոսկանեանցին ի հոգևոր կոչումն և առաջադրել թեմի առաջնորդին ձեռնադրել նորան քահանայ Արէշու գաւառի Բլէղ գիւղի վրայ։

—Նոյն օրը Սինոդը լսելով Դաշբուռուն գիւղացի Աղիզ Տէր-Անդրէասեանի գործը, որոշեց նախ՝ թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային ընդունել Աղիզ Տէր-Անդրէասեանին ի հոգևոր կոչումն և ապա՝ յանձնարարել Տ. Մեսրոպ արքեպիսկոպոսին ձեռնադրել նորան քահանայ Դաշբուռուն գիւղի ծխականների վրայ։ Թ. 643.